

մտածող ու զգացող «չիփլախներին», այդ БОСЯКЪ-ներին, և իր գրուածքներով տաղանդաւոր կերպով վերարտադրում է նրանց վարք ու բարքը, նրանց թշուառութիւնը և այդ թշուառութիւնից յառաջացող արատները, նրանց մտածմունքներն ու զգացմունքները, որոնք գործեր են դառնալու մօտիկ ապագայում: Խոր հոգեբանի աչքով նա տեսնում է նրանց մէջ զազանք, որ ոճիրներ է գործում, և մարդը, որ կարող է հրաշքներ գործել:

Թարգմանութիւնը անաջող է: «Առջևում, հորիզոնում,— գրում է թարգմանիչը,— բուսնում էին ինչ որ կերպարանքներ...» (Խրիմի լեոների մասին). «Սայլի սուր ձոխնը, որ մըրդեր է տանում...» «Մի սուրու ոչխար». «քնել հրապարակի վրայ...» «Պէտք չէ նրան (պառկած մարդուն) ձեռք տալ, բայց մենք կ'ուտենք նրա այն ամենը, ինչ որ կը գտնենք»: «Մեռելային—խաղաղ էր ամեն ինչ դաշտում»... «Ի՞նչպէս քեզ» (какъ тебѣ?):

Տ. Յ.

Անտօն Զեյսով. «ԴԻՄԱԿ». Թարգմ. Յարութիւն Եսայեան. 12 էր. գինը 5 կոպ. Թիֆլիս 1902 թ.

Պետախիզօրօվը շատ հարուստ է և փոքր ինչ բարեգործ: Այդ բաւական է, որ «ինտէլլիգէնտները» քծնեն նրա առաջ:

Դիմակահանդիսի ժամանակ Պետախիզօրօվը զիմակաւորուած և հարբած՝ սաստիկ անվայել է պահում իրան, անկարգութիւններ է անում և վիրաւորում է «ինտէլլիգէնտներին»:

Կանչում են ոստիկանական պաշտօնեային, ուղում են դուրս քչել այդ ամբարտաւան դիմակաւորին, արձանագրութիւն են կազմում, ստորագրում են... Բայց յանկարծ այդ ամբարտաւանը հանում է երեսի դիմակը, և ամենքը տեսնում են, որ նա միլիթօնատէր Պետախիզօրօվն է... Ընդհանուր շփոթութիւն և քծնումն...

«Ինձ ձեռք տուեց հրաժեշտի ժամանակ», ասում է «ինտէլլիգէնտներից» մէկը,—նշանակում է, որ չէ բարկացել...

Պատմուածքը գրած է Զեյսովին յատուկ տաղանդով: Թարգմանութիւնը վատ չէ:

Տ. Յ.